ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը՝ (այսուհետ՝ Ծառայություն) ի դեմս Ծառայության պետ Ծովինար Թադևոսյանի, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը (այսուհետ՝ Իրավագիտության ֆակուլտետ)՝ ի դեմս Իրավագիտության ֆակուլտետի դեկան Հարություն Խաչիկյանի, և Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը (այսուհետ՝ Հոգեբանության ֆակուլտետ)՝ ի դեմս Հոգեբանության ֆակուլտետի դեկան Ալեքսան Բաղդասարյանի (այսուհետ՝ միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր),

հաշվի առնելով Ծառայության՝ օրենքով նախատեսված հիմնական խնդիրները, դրանց իրականացման շրջանակում տեսական և գիտական հիմքերի ապահովման անհրաժեշտությունը,

կարևորելով Իրավագիտության և Հոգեբանության ֆակուլտետների գիտակրթական և գիտահետազոտական աշխատանքների մեծ ներուժը, ինչպես նաև՝ իրավունքի և հոգեբանության ոլորտներում գիտություն-պրակտիկա սերտ փոխգործակցությունն ապահովելու և անհրաժեշտ տեսական գիտելիքներ ունեցող պրակտիկ իրավաբաններ և հոգեբաններ պատրաստելու ուղղությամբ Իրավագիտության և Հոգեբանության ֆակուլտետների որդեգրած քաղաքականությունը,

նկատի առնելով քրեակատարողական ոլորտի օրենսդրության մշտական կատարելագործման և դրա գիտական հիմնավորման անհրաժեշտությունը, քրեակատարողական ոլորտի սոցիալ-հոգեբանական աջակցության և վերասոցիալականացման գործընթացների գիտահեն կազմակերպման անհրաժեշտությունը, քրեակատարողական ոլորտի շարունակական

համագործակցության մշակույթի զարգացումը, ինչպես նաև Իրավագիտության և Հոգեբանության ֆակուլտետների՝ վերոնշյալում աջակցելու պատրաստակամությունը,

արժևորելով Կողմերի համագործակցության ակնկալվող արդյունքները,

ընդունելով համագործակցության հարցում փոխադարձ շահագրգռվածության առկայությունը,

նպատակ ունենալով սահմանել համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները և եղանակները,

Կողմերը կնքեցին համագործակցության սույն Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր)՝ հետևյալի մասին

Հոդված 1. Համագործակցության ուղղությունները և եղանակները

Կողմերը համաձայնում են համագործակցել հետևյալ ուղղություններով և եղանակներով.

1.1. Քրեակատարողական օրենսդրության և օրենսդրական նախագծերի իրավական փորձաքննություն, իրավական վերլուծության իրականացում և դրանց վերաբերյալ գիտականորեն հիմնավորված եզրակացությունների տրամադրում, որոնք իրենց բնույթով խորհրդատվական նշանակություն ունեն:

1.2. Քրեակատարողական օրենսդրության կատարելագործման հարցերով առաջարկությունների ներկայացում:

1.3. Վերասոցիալականացման և սոցիալ-հոգեբանական աջակցության նորացված գործիքակազմի առաջարկում:

1.4. Ոլորտային խորհրդատվությունների, համատեղ քննարկումների և այլ միջոցառումների իրականացում:

1.5. Ոլորտին վերաբերող և հետաքրքրություն ներկայացնող մասնագիտական գրականության ստացման մասին փոխադարձ իրազեկում, հնարավորության դեպքում նաև՝ փոխանցում:

1.6. Իրավագիտության և Հոգեբանության ֆակուլտետների դասախոսների ներգրավում՝ Ծառայության աշխատակիցների վերապատրաստման շրջանակներում առանձին թեմաներով հանդես գալու դասախոսություններով, սեմինար-պարապմունքների իրականացում:

1.7. Ծառայության մասնագետների ներգրավում՝ Իրավագիտության և Հոգեբանության ֆակուլտետներում դասավանդվող որոշ մասնագիտական առարկաների շրջանակներում՝ առանձին թեմաներով հանդես գալու դասախոսություններով:

1.8. Իրավագիտության և Հոգեբանության ֆակուլտետների դասախոսների ներգրավում՝ Ծառայության աշխատակիցների վերապատրաստման դասընթացների մշակման, դրանց համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութերի պատրաստման շրջանակներում, Ծառայության համար դասավանդող կադրերի պատրաստում, վերապատրաստում, համատեղ կոնֆերանսների, հետազոտությունների և ծրագրերի իրականացում:

1.9. Գիտական ոլորտային հետազոտությունների թեմատիկայի համատեղ մշակում և իրականացում, մասնագիտական կարծիքների փոխանակում:

1.10. Իրավագիտության և Հոգեբանության ֆակուլտետների ուսանողներին Ծառայության աշխատանքներին ծանոթացում, ուսանողների մասնագիտական պրակտիկայի կազմակերպում և ապահովում:

1.11. Իրավագիտության ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների ներգրավմամբ ազատությունից զրկված անձանց իրավագիտակցության բարձրացման նպատակով մասնագիտական դասախոսությունների, քննարկումների իրականացում:

1.12. Հոգեբանության ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների ներգրավմամբ ազատությունից զրկված անձանց շրջանում հոգեկան առողջության և հոգեբանության վերաբերյալ մասնագիտական դասախոսությունների, քննարկումների իրականացում:

1.13. Սույն հոդվածով նախատեսված համագործակցության ուղղությունները սահմանող դրույթները չեն սահմանափակում Կողմերի համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ բնագավառներում:

Հոդված 2. Ֆինանսական պարտավորություններ

2.1. Կողմերն ընդունում են, որ սույն Հուշագրի հիման վրա ծավալվող համագործակցության շրջանակներում չեն կարող առաջանալ ֆինանսական և այլ նյութական պարտավորություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերը լրացուցիչ համաձայնագրերով հաստատում են նման պարտավորությունները համագործակցության որևէ ուղղությամբ իրականացվող համատեղ ծրագրի շրջանակներում:

Հոդված 3. Հուշագրի գործողության դադարեցումը կամ դրանում փոփոխությունների կատարումը

3.1. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի ցանկությամբ՝ այդ մասին ոչ ուշ, քան 60 (վաթսուն) օր առաջ մյուս կողմին գրավոր ծանուցումով:

3.2. Հուշագրի գործողության դադարեցման դեպքում նախկինում Կողմերի կնքած և ֆինանսավորված լրացուցիչ համաձայնագրերը շարունակում են գործել մինչև դրանց գործողության ավարտը, եթե Կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ որոշում չեն կայացնում:

3.3. Հուշագրում փոփոխությունները կատարվում են փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Փոփոխություններ պարունակող փաստաթղթերը կցվում են Հուշագրին և կազմում են դրա բաղկացուցիչ մասը:

3.4. Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում Կողմերը կարող են համատեղ ծրագրերի իրականացման նպատակով կնքել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն կարող հակասել Հուշագրին:

Հոդված 4. Կողմերի միջև տարաձայնությունների կարգավորումը

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության հետ կապված տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Հոդված 5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Հուշագիրը բացառիկ իրավունքներ չի վերապահում Կողմերից որևէ մեկին: Կողմերն ազատ են Հուշագրով նախատեսված համագործակցության առարկայի վերաբերյալ համաձայնագրեր և հուշագրեր կնքել այլ անձանց կամ մարմինների հետ: Կողմերը պարտավոր են պահպանել նաև կոնֆիդենցիալություն այն տեղեկատվության մասին, որը կարող է հանդիսանալ կողմերի աշխատանքային գործունեության կամ իրավաբանական գործընթացների գաղտնիք:

5.2. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.3. Հուշագիրը կազմված է երեք օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.4. Հուշագիրը ստորագրված է Երևան քաղաքում, 2025 թվականի մայիսի 30-ին:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ	**Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկան**	**Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան**
Ծովինար Թադևոսյան	**Հարություն Խաչիկյան**	**Ալեքսան Բաղդասարյան**